ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԴԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԳՍՊՈՅԱՆ ԳՐԻՇԱ
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանման աղետների ռիսկի կառավարման և քաղաքացիական պաշտպանության ամբիոնի պրոֆեսոր

DOI: 10.61746/18292984-2026.1.28cmt-01

Համառոտագիր: Հոդվածում քննարկվել են Վայոց ձորի մարզի ժողովրդագրական այն ցուցանիշները, որոնք ամենատարբեր աշխարհաքաղաքական իրադրություններում կարևորվում են ոչ միայն կայուն զարգացման, այլև տարաբնույթ բնական աղետների ռիսկի նվազեցման և ամենակարևորը՝ ազգային ավտանգության պատշաճ մակարդակի ապահովման տեսանկյունից:

Բանալի բառեր՝ ժողովրդագրություն, բնակչության բնական աճ, միգրացիա, կայուն զարգացում, ժողովրդագրական քաղաքականություն, ժողովրդագրական անվտանգություն, բնական աղետների ռիսկ:

Ժողովրդագրական գործընթացները յուրաքանչյուր երկրի զարգացման առանցքային ցուցիչներից են, որոնք անմիջական ազդեցություն ունեն ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ ազգային անվտանգության համակարգերի վրա: Հայաստանի Հանրապետության մարզերի մեծ մասում նկատվող ժողովրդագրական անկայունությունը, հատկապես՝ սահմանամերձ և լեռնային տարածքներում, լուրջ մարտահրավեր է երկրի երկարաժամկետ կայուն զարգացման համար: Այդ համատեքստում Վայոց ձորի մարզն առանձնանում է ոչ միայն բնակչության կտրուկ նվազման, տարիքային անհավասարակշռության և միգրացիոն բարձր մակարդակի ցուցանիշներով, այլև իր աշխարհագրական դիրքով և սահմանների ուրվագծով: Այսպես, եթե մինչև 44 – օրյա պատերազմի ավարտը Սյունիքի մարզը միակն էր, որ Ադրբեջանի հետ ուներ երկկողմանի (արևելքում և արևմուտքում) սահման, ապա նշված պատերազմի արդյունքում Վայոց ձորի մարզը, որը հարավում սահմանակցում էր Ադրբեջանի կազմում գտնվող Նախիջևանի ԻՀ հետ, իր հյուսիս-արևելքում ևս

ունեցավ սահման Ադրբեջանի հետ: Ընդ որում՝ Ինչպես Սյունիքի, այնպես էլ Վայոց ձորի մարզի սահմանագծի մեծ մասն Ադրբեջանի և նրա կազմում գտնվող Նախիջևանի ԻՀ հետ է:

Իհարկե, ժողովրդագրական հիմնախնդիրներն այս կամ այն չափով առկա են ՀՀ բոլոր մարզերում, սակայն Վայոց ձորի մարզի համար դրանց լուծումներն առավել առաջնահերթ են ոչ միայն այն պատճառով, որ բնակչության թվաքանակով և խտությամբ ՀՀ մարզերի ցանկում զբաղեցնում է վերջին տեղը, այլև այն պատճառով, որ հյուսիս-արևելքում Ադրբեջանի հետ առաջացած սահմանը՝ որպես նոր իրողություն, լրացուցիչ և որոշակի միջոցառումների իրականացման պահանջ է առաջացնում ոչ միայն տնտեսության զարգացման, այլև ազգային անվտանգության ապահովման և աղետների ռիսկի կառավարման բնագավառներում:

Վիճակագրական տվյալները, ինչպես նաև առանձին հետազոտություններ [1], որոնք մատնանշում են Վայոց ձորի մարզի ժողովրդագրական ցուցանիշների բացասական միտումները, այդուհանդերձ, այդ ցուցանիշների բարելավման ուղղությամբ առաջարկվող միջոցառումները չեն մշակվել համալիր-համակարգային մեթոդով հետազոտության արդյունքների հիման վրա, այսինքն՝ ուղղորդված են եղել ոչ թե այդ բացասական միտումների պատճառների բացահայտմանն ու կանխարգելմանը, այլ դրանց հետևանքների այս կամ այն չափով մեղմացմանը:

Մեր կարծիքով՝ ստորև ներկայացված աղյուսակում բերված տվյալների վերլուծության արդյունքները կարող են բավարար հիմք լինել՝

- կայուն զարգացման տեսանկյունից բացահայտելու Վայոց ձորի մարզի ժողովրդագրական ցուցանիշների բացասական միտումների հիմնական պատճառները և դրանց վերացման նպատակով ընդունել մարզի նոր ժողովրդագրական քաղաքականություն,
- ամրագրելու մարզում ձևավորված արդի ժողովրդագրական իրավիճակի հետևանքով աղետների ռիսկի արդյունավետ կառավարման խոչընդոտները և դրանց նվազեցման ու վերացման ուղղությամբ մշակել սոցիալ-տնտեսական զարգացման հատուկ ծրագրեր,
- մարզում ազգային անվտանգության ապահովման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ իրատեսական ծրագրերի մշակման և իրագործման համար:

Իսկ այն, որ մարզի ժողովրդագրական իրադրությունն ուղղակի փոխազդեցության մեջ է գտնվում աղետների ռիսկի կառավարման արդյունավետության և ազգային անվտանգության պատշաճ մակարդակի ապահովման հետ, ուղղակի անառարկելի է, քանզի այդ խնդիրները կարելի է արդյունավետ լուծել միայն համապատասխան գիտելիքներով և կարողունակություններով օժտված մարդկային ռեսուրսների պատշաճ քանակի առկայության դեպքում: Այսպես, ինչպես նշում է քաղաքագետ Ռ. Ղևոնդյանը. «Պետության անվտանգային համակարգը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ, սակայն ժողովրդագրական անվտանգությունը կարևորագույններից մեկն է և հիմնարար նշանակություն ունի: Աշխարհաքաղաքական ժամանակակից անցումային գործընթացներն ավելի են ընդգծում անվտանգային խնդիրները: Բաց սահմանների պայմաններում պետություններն ստիպված են նոր միջոցներ գտնել ժողովրդագրական խնդիրները լուծելու համար:- և ապա անմիջապես ավելացնում, - Ժողովրդագրական անվտանգությունը թերևս Հայաստանի Հանրապետության պետականության մարտահրավերներից այն գլխավոր խնդիրն է, որն իր էությամբ ներթափանցում և բաղկացուցիչ մաս է կազմում բոլոր այլ անվտանգային մարտահրավերների կառուցվածքում» [6, էջ 20]:

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունում ժողովրդագրական իրադրության նշանակությունը պատշաճ մակարդակով կարևորվեց բավականին ուշ՝ 44-օրյա պատերազմի սկզբից առաջ՝ 2020 թ. ամռանը, երբ «Ներպետական մակարդակում մեր առջև ծառացած սպառնալիքների թվում են ժողովրդագրական իրավիճակի առկա միտումները, որոնք բացասաբար են ազդում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության, սոցիալական և տնտեսական ոլորտների կայուն զարգացման վրա: Ծնելիության մակարդակի անկման, արտագաղթի, բնակչության տարիքային կառուցվածքի փոփոխության, անհամաչափ տարածքային տնտեսական զարգացման միտումներն էական մարտահրավեր ու սպառնալիք են Հայաստանի համար, մասնավորապես՝ ուղեղների արտահոսքի, աշխատուժի պակասի, սոցիալական ապահովության համակարգի համար բեռի զգալի մեծացման դրսևորումներով» ձևակերպումն իր արտացոլումը գտավ ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության փոփոխված տարբերակում [7, կետ 2. 15]:

Ամփոփելով սույն հոդվածի կարևորությունն ու արդիականությունը՝ անցնենք ՀՀ Վայոց ձորի մարզի վերաբերյալ հիմքային նշանակություն ունեցող որոշ ընդհանուր տեղեկությունների ներկայացմանը և ստորև բերված աղյուսակում ներառված վիճակագրական տվյալների վերլուծությանը, ինչը, մեր կարծիքով, բավարար հիմք կարող է լինել մարզի ժողովրդագրական հիմնախնդիրների բացահայտման և դրանց հիման վրա ժողովրդագրական անվտանգության արդյունավետ ապահովման ուղղությամբ անհրաժեշտ ռազմավարությունների և համալիր միջոցառումների մշակման համար:

Վայոց ձորի մարզի (Վ.Ձ.) ժողովրդագրական ընդհանուր պատկերը Հայաստանի Հանրապետության (ՀՀ) համեմատությամբ[1]

	2003թ.		2008թ.		2013թ.		2018թ.		2023թ.	
	Վ.Ձ.	ՀՀ	Վ.Ձ.	ՀՀ	Վ.Ձ.	ՀՀ	Վ.Ձ.	ՀՀ	Վ.Ձ.	ՀՀ
Մշտական բնակչության թվաքանակը (հազ.մարդ)	55,9	3211,3	55,8	3230,1	52,2	3026,9	49,3	2969,0	47,9	2964,3
0-14 տարեկան	x	738,7	10,9	673,4	9,6	570,7	9,5	599.3	10, 2	563,8
15-64 տարեկան	x	2149,6	38,2	2169,9	36,7	2135,3	33,9	2023,7	30.3	1939,1
65+ տարեկան	x	323,0	6,7	386,8	5,9	320,9	5,9	348,9	7,4	461,4
Բնակչության խտությունը (մարդ/կմ^2)	24	108	24	108	22	101	21	100	21	100
Քաղաքային բնակչությունը (հազ.մարդ)	19,5	2062,2	19,3	2070,5	18,4	1917,5	17,4	1895,4	16,5	1894,6
Գյուղական բնակչությունը (հազ.մարդ)	36,4	1148,1	36,5	1159,6	33,8	1109,4	31,9	1076,6	31,4	1069,7
Աշխ.ռեսուրսները (հազ.մարդ)	42,8	2008,4	46,3	2202.6	39,8	2189,1	28,5	2007,3	35,6	2223,2
Տնտեսապես ակտիվ բնակչությունը (հազ.մարդ)	29,0	1232,4	27,2	1192,5	30,1	1388,4	16,0	1141,6	20,3	1341,2
Զբաղվածության մակարդակը (%)	65,9	45,5	56,3	50,7	67,3	53,2	44,0	45,2	50,6	52,8
Գործազրկության մակարդակը (%)	5,8	10,1	3,9	6,3	11,0	16,2	21,8	20.5	11,4	12,4
Ծնվածներ (‰)	12,1	11.2	13,1	12,7	12,4	13,8	11,5	12,3	14,4	12,3
Մահացածներ (‰)	7,9	8,2	8,3	8,9	9,1	9,0	8,6	8,7	9,1	8.2
Բնական աճը (‰)	4,2	3,1	4,8	4,2	3,3	4,8	2,9	3,6	5.3	4,1
Միգրացիա (մարդ) 1.եկածներ	89	13100*	146	13000*	x	19800*	x	15300*	x	78500*
2. մեկնածներ	405	16500*	513	14426*	x	44200*	x	33586*	x	37100*
3.միգ.մնացորդ(+,-)	-316	-3400*	-367	-1426*	x	-24400*	x	-18286*	x	+41400*
Ամուսնություն	267	15463	312	18465	358	18363	274	14822	320	16330
Ամուսնալուծություն	33	1820	54	3031	74	3756	47	3820	62	4525

1. Աղյուսակի նյութի տեղեկատվական աղբյուրներն են՝ Վիճակագրական կոմիտեի 2003-2024 թթ. «ՀՀ Վայոց ձորի մարզը թվերով» [2], «ՀՀ բնակչությունը» [3], «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով [4], տարեգրքերն [5] ու հրապարակումները [8]:
* Տվյալներն ստացվել են «Արհեստական բանականության» ծրագրի միջոցով:
X – վիճակագրական ճշգրիտ տեղեկությունները բացակայում են:

Այսպես, 01.01.2024 թ. դրությամբ Վայոց ձորի մարզի տարածքը կազմել է 2310 քառ. կմ (ՀՀ տարածքի 7,8 %), մշտական բնակչության թվաքանակը՝ 48,5 հազ. մարդ, այդ թվում քաղաքայինը՝ 16,9 հազ. մարդ, գյուղականը՝ 31,6 հազ. մարդ: 2023 թ. ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը կազմել 1,6 %: Մշտական բնակչության ընդհանուր թվաքանակում քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը կազմել է 34,8 %, գյուղական բնակչությանը՝ 65,2 %: Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են՝ 189530,1 հա, այդ թվում՝ վարելահողերինը՝ 15860,4 հա: Մարզի տնտեսության տեսակարար կշիռը ՀՀ տնտեսությունում կազմել է 1,2 %, այդ թվում՝ գյուղատնտեսության համախառն արտադրանքինը՝ 2,3 %, մշտական շինարարությանը՝ 1,7 %, արդյունաբերական արտադրանքինը՝ 1,2 %, մանրածախ առևտրի շրջանառությանը՝ 0,7 %, ծառայություններինը՝ 0,6 %: 2023 թ. աղքատության մակարդակի ցուցանիշը մարզում կազմել է 30.9 %, ինչը ՀՀ միջին ցուցանիշից (23.7 %) բավականին բարձր է [2]:

Եթե ասվածին ավելացնենք նաև այն, որ «մարզը բնութագրվում է նաև սեյսմիկ ռիսկերի և սողանքների առկայությամբ, բնական պաշարների թերօգտագործմամբ, կարկտահարության դեմ պայքարի ցածր մակարդակով, որոշ բնական վտանգավոր երևույթների (քարաթափումներ, սելավներ, գետերի վարարումներ, ցրտահարություններ, երաշտներ) դրսևորման անհամեմատ մեծ հաճախականությամբ» [1], ապա անառարկելի և ակնառու կդառնա նաև աղետների ռիսկի պատշաճ կառավարման գործում մարզի ժողովրդագրական իրադրության նշանակությունը:

Աղյուսակում բերված տվյալներից երևում է, որ ինչպես Վայոց ձորի մարզի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը վերջին 20 տարվա (2003 – 2023 թթ.) ընթացքում, հատկապես, սկսած 2008 թվականից, յուրաքանչյուր 5-ամյա կտրվածքով անընդհատ նվազել է: Ընդ որում՝ մարզի մշտական բնակչության թվաքանակը նվազել է 8000 մարդով, իսկ ՀՀ-ինը՝ 247000 մարդով, այսինքն՝ Վայոց ձորի մարզի մշտական բնակչությունը նշված 20

տարվա ընթացքում նվազել է ավելի քան 14,3 %-ով, իսկ ՀՀ-ինը՝ շուրջ 7,7 %-ով: Աղյուսակից երևում է, որ այդ նույն ժամանակահատվածում մարզում և ՀՀ-ում նվազել են ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակչության թվաքանակները: Բնակչության թվաքանակի նվազման արդյունքում դիտարկվող ժամանակաշրջանում բնակչության խտության ցուցանիշը նվազել է ինչպես ՀՀ-ում (8 մարդով), այնպես էլ Վայոց ձորի մարզում (2 մարդով), սակայն, ի տարբերություն մարզի, որտեղ այդ նվազում,ը ըստ աղյուսակում ներկայացված 5-ամյա կտրվածքի, ընթացել է հավասարաչափ, ՀՀ-ում 2008 թ. համեմատությամբ 2013 թ. բնակչության խտության ցուցանիշն իջել է կտրուկ (7 մարդով): 2023 թ. ՀՀ բնակչություն խտության ցուցանիշը կազմել է 100 մարդ, ինչը աշխարհի բնակչության միջին խտության ցուցանիշին (63 մարդ) գերազանցում է 1,5 անգամ, իսկ Վայոց ձորի մարզի բնակչության միջին խտության ցուցանիշը (21 մարդ) 3 անգամ պակաս է աշխարհի բնակչության միջին խտությունից և մոտ 5 անգամ պակաս է ՀՀ բնակչության միջին խտությունից:

Եթե հաշվի առնենք բնակչության շարժի ժողովրդագրական գործընթացները, ապա կարող ենք ասել, որ բնակչության թվաքանակի մեծությունը պայմանավորված է 2 հիմնական՝ բնական աճի և միգրացիայի ցուցանիշներով, որոնցից առաջինը ձևավորվում է ծնելիության և մահացության ցուցանիշների տարբերությունից, իսկ երկրորդը՝ այլ տարածքներից եկածների և այլ տարածքներ մեկնածների տարբերությունից: Աղյուսակից երևում է, որ 2003 թ. համեմատությամբ 2023 թ. ծնվածների թվաքանակը ՀՀ-ում ավելացել է ընդամենը 1,1 ‰-ով, մահացածների թվաքանակը մնացել է նույնը, իսկ բնական աճի ցուցանիշն ավելացել է 1,0 ‰-ով: Վայոց ձորի մարզում ծնվածների թվաքանակն ավելացել է 2,3 ‰ - ով, մահացածների թվաքանակը՝ 0,3 ‰ – ով, իսկ բնական աճի ցուցանիշը նվազել է 0,1 ‰ - ով: 2023 թ. ՀՀ բնակչության բնական աճի ցուցանիշը կազմել է 4,1‰, իսկ Վայոց ձորինը՝ 5,3 ‰՝ այն դեպքում, երբ աշխարհի բնակչության աճի միջին ցուցանիշը տարեկան կազմում է 15,0 ‰, իսկ ՀՀ սահմանակից երկրներում այդ ցուցանիշը 2-3 անգամ գերազանցում է ՀՀ ցուցանիշին:

Միանգամայն հասկանալի է, որ բնակչության բնական աճի ցուցանիշում ծնվածների թվաքանակն ուղղակի և անուղղակի կապերով առնչվում է ամուսնությունների և ամուսնալուծությունների քանակի ցուցանիշների հետ, որոնք

2003 թ. համեմատությամբ 2023 թ. ՀՀ-ում ավելացել են. ամուսնությունների թիվը՝ 867-ով, ամուսնալուծություններինը՝ 2705-ով, իսկ Վայոց ձորի մարզում համապատասխանաբար՝ 53-ով և 29-ով: Ընդ որում՝ եթե 2003թ. ՀՀ-ում ամուսնալուծությունները կազմել են ամուսնությունների 11,7 %-ը, ապա 2023 թ. այն կազմել է ավելի քան 28,0%, իսկ Վայոց ձորի մարզում համապատասխանաբար՝ 12,3 % և 19,3 %:

Եթե կրկին անդրադառնանք բնակչության աճի ցուցանիշին, ապա պարզ է, որ, բացի բնական աճի ցուցանիշից, այն մեծապես կախված է նաև բնակչության միգրացիոն երևույթների դրսևորումներից, ուստի միանգամայն հասկանալի է, որ միգրացիայի ցուցանիշների ճշգրիտ տվյալների վերլուծության արդյունքների հաշվառումը բնակչության աճի առավել հավաստի պատկերի ստացման գործում ոչ թե նախընտրելի է, այլ պարտադիր: Սակայն, քանի որ միգրացիոն երևույթների վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալները հիմնականում բացակայում են, կամ էլ հաշվարկման հիմքում դրված են բնակչության տարբեր շրջանակներ (ինչը բացառում է տարիների շարքի համեմատության մեթոդով վերլուծությունն ու հնարավորինս ճշգրիտ արդյունքների ստացումը), ուստի աղյուսակում ներկայացվել են Արհեստական բանականության ծրագրի միջոցով ստացված, թեկուզև ոչ այնքան արժանահավատ տվյալներ, որոնք, սակայն, վերաբերում են ՀՀ **մշտական բնակչության** միգրացիային, ինչը հիմնականում բացակայում է պաշտոնական վիճակագրական հրապարակումներում: Ինչ վերաբերում է Վայոց ձորի մարզին, նույնիսկ Արհեստական բանականության միջոցով հնարավոր չեղավ որևէ տվյալ ստանալ միգրացիոն երևույթների մասին:

Աղյուսակից երևում է, որ, չնայած ՀՀ եկած և ՀՀ-ից մեկնած մշտական բնակչության թվաքանակը նշված ժամանակաշրջանի տարիների շարքում աճել կամ նվազել է, այդուհանդերձ, ակնառու է, որ եթե մինչև 2018 թվականը միգրացիայի մնացորդը եղել է բացասական, ապա 2023 թվականին գրանցվել է բավականին մեծ դրական մնացորդ: Իսկ ինչ վերաբերում է Վայոց ձորի մարզի մշտական բնակչության միգրացիոն երևույթներին, որոնց վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալները բացակայում են, ապա փորձ ենք արել դրանց մասին գոնե մոտավոր պատկերացում կազմել մարզի բնական աճի բացարձակ թվաքանակների և մշտական

բնակչության ցուցանիշների միջոցով՝ ներբևեռացման և արտաբևեռացման մեթոդների կիրառմամբ: Այսպես, 2003 թ. մարզի մշտական բնակչության աճը կազմել է 4.2 ‰ կամ 234 մարդ, իսկ 2008 թ. համապատասխանաբար՝ 4.8 ‰ կամ 268 մարդ, 2003-2008 թթ. բնական աճի միջին տարեկան թվաքանակը կկազմի շուրջ 251 մարդ: Այսինքն՝ եթե հաշվի առնենք միայն բնական աճի ցուցանիշը, ապա մարզի մշտական բնակչության թվաքանակը 2003 թ. համեմատությամբ 2008 թ. պետք է ավելանար 1255 մարդով, այնինչ այն նվազել է 100 մարդով, ինչը նշանակում է, որ 2003-2008 թվականների ընթացքում մարզի մշտական բնակչության միգրացիայի մնացորդը կազմել է -1355 մարդ: Հաշվարկման այս մեթոդը կիրառելով նաև մյուս 5-ամյա ժամանակաշրջանների համար՝ ստացել ենք Վայոց ձորի մարզի միգրացիայի մնացորդի վերաբերյալ հետևյալ պատկերը. 2013 թ.՝ -1700 մարդ,
2018 թ. համար՝ -1513 մարդ, իսկ 2023 թ. համար՝ -2392 մարդ:

2003-2023 թթ. ընթացքում Վայոց ձորի մարզի մշտական բնակչության թվաքանակի և բնական աճի նվազումն արդեն այսօր լուրջ հիմնախնդիրներ է առաջացրել մարզի սոցիալ-տնտեսական կայուն զարգացման առաջանցիկ ծրագրերի իրականացման, բնապահպանական խնդիրների լուծման, բնական աղետների ռիսկի կառավարման և այլ ասպարեզներում, մանավանդ՝ եթե նկատի ունենանք նաև այն, որ ոչ միայն մարզի գյուղական բնակավայրերն են փոքր (բնակչության թվաքանակի առումով), այլև քաղաքները, գյուղական բնակչությունը կազմում է մարզի բնակչության ավելի քան 65 %-ը (2023 թ.):

Այդուհանդերձ, Վայոց ձորի մարզի ժողովրդագրական անվտանգության հեռանկարը մեծապես կախված է ոչ միայն մշտական բնակչության ընդհանուր թվաքանակից, այլ նաև աշխատանքային ռեսուրսների, տնտեսապես ակտիվ բնակչության, զբաղվածների և գործազուրկների թվաքանակներից, բնակչության տարիքային կառուցվածքում համապատասխան տարիքային խմբերի թվաքանակների տեսակարար կշիռներից: Իհարկե, եթե աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, գործազրկության մակարդակի իջեցման և զբաղվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ մարզի զարգացման քառամյա և հնգամյա ծրագրերում մշտապես նախատեսվել են որոշակի միջոցառումներ, ապա բնակչության տարիքային կառուցվածքում հատկապես 0-14 տարեկանների խմբերի տեսակարար

կշիռների բարձրացման ուղղությամբ մարզերի համայնքները որևէ լծակ չունեն, քանզի ժողովրդագրական քաղաքականության մշակումն ու ընդունումը կառավարության գործառույթ է և իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին:

Միանգամայն հասկանալի է, որ խնդրի լուծումն առաջին հերթին վերաբերում է ժողովրդագրական **ակտիվ** քաղաքականության (հատկապես ծնելիության մակարդակի բարձրացման), հարկաբյուջետային, դրամավարկային քաղաքականություններին, սոցիալական ապահովության, առողջապահական, կրթական և այլ համակարգերի, աղետների ռիսկի արդյունավետ կառավարման (այդ բնագավառում առաջնահերթ նշանակություն ունի վտանգավոր բնական երևույթների տարածա-ժամանակային դրսևորումների հաճախականության, ուժգնության և տևողության գնահատման համակարգի մշակումն ու ներդրումը) ոլորտների նպատակային գործունեությանը, որոնք առանձին և համալիր հետազոտությունների առարկա են:

Ամփոփելով Վայոց ձորի մարզի արդի ժողովրդագրական հիմնախնդիրների լուծման և ժողովրդագրական անվտանգության ապահովման հարցը՝ կարծում ենք, պատկան մարմինները ժողովրդագրական քաղաքականությունը վերանայելիս նպատակահարմար է, որ քննության առարկա դարձնեն նաև **հղիության նպաստի** սահմանման հարցը (առանց որևէ խտրականության), ինչը պետք է նպատակաուղղված լինի հղիության ըստ ամենայնի պահպանմանը, հղիության արհեստական ընդհատման դեպքերի խիստ նվազեցմանը (բացառությամբ պտղի կամ այն կրողի առողջությանն սպառնացող դեպքերի), և ենթադրում է այդ նպաստի ամենամսյա վճարում՝ հղիության բժշկական հաստատման հաջորդ ամսվանից մինչև ծննդաբերության օրը: Ընդ որում՝ նպատակային կլինի մինչև պտղի 20 շաբաթական դառնալը նպաստի չափը ամեն ամիս ավելացնել 10 %-ով, որից հետո այդ մակարդակը հաստատուն պահել մինչև ծննդաբերության օրը: Կարելի է նաև քննության առարկա դարձնել մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերում՝ Վայոց ձորի, Սյունիքի, Տավուշի մարզերի գյուղական բնակավայրերում և մնացած մարզերի սահմանակից բնակավայրերում հղիության նպաստի չափի տարբերակված մոտեցումների սահմանման հարցերը:

СОВРЕМЕННЫЕ ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ВАЙОЦДЗОРСКОЙ ОБЛАСТИ

ГСПОЯН ГРИША
профессор кафедры по управлению рисками стихийных бедствий и гражданской защите Учебного подразделения спасательной службы и кризисного управления Образовательного комплекса Министерства внутренних дел
Республики Армения
кандидат географических наук, доцент

Аннотация. В статье рассматриваются демографические показатели области Вайоц Дзор, которые в различных геополитических ситуациях имеют важное значение не только для устойчивого развития, но и для снижения риска различных стихийных бедствий и, что, наиболее важно, для обеспечения надлежащего уровня национальной безопасности.

Ключевые слова: демография, естественный прирост населения, миграция, устойчивое развитие, демографическая политика, демографическая безопасность, риск стихийных бедствий.

CONTEMPORARY DEMOGRAPHIC ISSUES IN VAYOTS DZOR PROVINCE

GSPOYAN GRISHA
Professor at the Chair of Disaster Risk Management and Civil Protection,
Rescue Service and Crisis Management Educational Unit,
Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia
PhD in Geography, Associate Professor

Abstract. The article discusses the demographic indicators of Vayots Dzor region, which, in various geopolitical situations, are important not only for sustainable development, but also for reducing the risk of various natural disasters and, most importantly, for ensuring an adequate level of national security.

Keywords: demography, natural population growth, migration, sustainable development, demographic policy, demographic security, natural disaster risk.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մ.Գ. Մանասյան. Վայոց Ձորի կայուն զարգացման հիմնահարցերը: «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական հանդես, N 2 (25), 2024. էջ 21-29:
2. ՀՀ վիճակագրական կոմիտե: Վայոց Ձորի մարզը թվերով: ***https://www.armstat.am/file/article/marzer_2024_29.pdf***

3. ՀՀ վիճակագրական կոմիտե: Հրապարակումներ:
https://www.armstat.am/am/?nid=82
ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով:
4. ՀՀ վիճակագրական կոմիտե: Հրապարակումներ: Հայաստանի ժողովրդագրական ժողովածու:***https://www.armstat.am/am/?nid=82&id=2705*** Բնակչություն:
5. Հրապարակումներ: Տարեգրքեր: ***https://www.armstat.am/am/?nid=586***
Բնակչություն: Զբաղվածություն:
6. Ռ. Ղևոնդյան. ՀՀ ժողովրդագրական անվտանգության քաղաքական մարտահրավերները աշխարհաքաղաքական ներկա իրողությունների պայմաններում: «Գլոբալացվող աշխարհում մարդու իրավունքների պաշտպանության ժամանակակից հրամայականները Միջազգային գիտաժողովի նյութեր, 30 նոյեմբերի 2023, Երևան, 2024:
7.ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն:
https://www.mfa.am/~filemanager/security%20and%20defense/AA-Razmavarutyun-Final.pdf
8. ՀՀ վիճակագրական կոմիտե: Հրապարակումներ:
https://www.armstat.am/am/?nid=82 Հայաստանը թվերով:

Հոդվածը գրախոսվել է 12.02.2026
Ներկայացվել է տպագրության 19.02.2026